

ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՄԵՐԺՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՎԱԽԸ

Դադարի՛ր վախենալուց
Մաս 3

«Մարդի վախը որոգայթի մեջ կզգի, բայց Տիրոջն ապավինողը կպաստանվի:» Առակաց 29:25

1- Ի՞նչ կարող է անել մերժված լինելու վախը

- Թույլ է տալիս, որ ուրիշները հստորեն օգտագործեն մեզ
- Պարտադրում է մեզ նմանվել ուրիշներին
- Մտիպում է մեզ թաքցնել ճշմարտությունը
- Խանգարում է մեզ սիրել և սիրված լինել
- Մղում է մեզ ամոթի և մենակության
- Առաջացնում է դեպրեսիա և դժբախտության զգացում
- Արգելում է մեզ վկայել Հիսուսի մասին

«...Շատերը հավատացին նրան. սակայն Փարիսեցիների պատճառովը չէին դավանում...որովհետև մարդկանց փառքն ավելի սիրեցին քան թե Աստծո փառքը:» Հովհաննես 12:42-43

2- Ինչպե՞ս հաղթահարել մերժված լինելու վախը

➤ Դնելով Աստծուն առաջին տեղը

«Տերն է իմ լույսը և իմ փրկությունը, ես ումի՞ց պիտի վախենամ:» Մաղմոս 27:1

«Ետ դարձրու ինձանից իմ նախատիները, որ նրանից վախեցա... ահա ցանկանում եմ քո պատվիրանքներին...Տեր, թող քո ողորմությունը գա ինձ վրա. ապա ես կպատասխանեմ ինձ խոսքով նախատողներին:» Մաղմոս 119:39-42

«Ջանք արա որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առաջին...» Բ Տիմոթեոս 2:15

➤ Դնելով մարդկանց իրենց տեղը

«Ես՝ ես եմ ձեզ մխիթարողը, դու ո՞վ ես, որ վախենում ես մահկանացու մարդից, և մարդի որդիից, որ խոտի նման է շինված:» Եսայիա 51:12

«...մարդկա՞նց եմ հաճեցնում, թե Աստծուն. կամ ուզում եմ մարդկա՞նց հաճո լինել. եթե տակավին մարդկանց հաճո լինե՞ի, Քրիստոսի ծառա չէի:» Գաղ. 1:10

«Եթե Աստված մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ:» Հռովմայեցիս 8:31

Ճշմարտություն:

Երջանիկ լինելու համար ես կարիք չունեմ ուրիշների վավերացմանը

➤ Դնելով ինձ՝ իմ պատշաճ տեղը

«Եվ մի քիչ ցածացրիք նրան հրեշտակներիցը (կամ Աստծուց), բայց փառքով ու պատվով պսակեցիք նրան:» Մաղմոս 8:5

«Ինչպես որ ընտրեց մեզ նրանով (Քրիստոսով) աշխարհքի ստեղծելուցն առաջ, որ մենք սուրբ և անարատ լինենք նրա առաջին սիրով:» Եփեսացիս 1:4

«Որովհետև ոչ թե իր անձր հանձնարարողն է ընտիր. այլ նա՝ որին Տերն է հանձնարարում:» Բ Կորնթացիս 10:18

«Թեև հայրս ու մայրս թողեն ինձ, բայց Տերն ընդունում է ինձ:» Մաղմոս 27:10

Հաջորդ Քարոզի Թեման
ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՁԱԽՈՂԵԼՈՒ ՎԱԽԸ
Հովիվ Սարո Խաչիկեան